



CCALIFORNIA DEPARTMENT OF EDUCATION
CELDT Test Results Interpretation Guide for Kindergarten and Grade One
(August 2011)

T10-335 Eastern Armenian, Sylfaen Font

[NOTE TO LOCAL EDUCATIONAL AGENCIES (LEAs): As a form of assistance to LEAs, the California Department of Education (CDE) offers this translation free of charge. Because there can be variations in translation, the CDE recommends that LEAs confer with local translators to determine any need for additions or modifications, including the addition of local contact information or local data, or modifications in language to suit the needs of specific language groups in the local community. If you have comments or questions regarding the translation, please e-mail the Clearinghouse for Multilingual Documents (CMD) at cmd@cde.ca.gov.]

**DELETE THIS COVER PAGE BEFORE USING THE
TRANSLATION WHICH FOLLOWS BELOW.**



Կալիֆորնիայի
անգլերեն
լեզվի
զարգացման
քննություն

2011–12 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ
ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Այս ուղեցույցը մշակվել է օգնելու համար ծնողներին հասկանալու այն տեղեկությունը, որը պարունակվում է *Կալիֆորնիայի անգլերեն լեզվի զարգացման քննության (California English Language Development Test, CELDT) աշակերտի կատարման մակարդակի զեկույցում (Student Performance Level Report)*:

Քննության նպատակը

Նահանգի օրենքը (*Կրթական օրենքի* մասեր 313 և 60810) և պետական օրենքը (Տարրական և միջնակարգ կրթության ակտի գլուխ III) պահանջում են, որ դպրոցական շրջաններն անցկացնեն անգլերեն լեզվի հմտության նահանգային քննություն (1) նոր գրանցված աշակերտների համար, ում առաջնային լեզուն անգլերենը չէ, և (2) այն աշակերտների համար, ովքեր անգլերեն են սովորում: Կալիֆորնիայի հանրային դպրոցների աշակերտների համար այդ քննությունը CELDT-ն է: CELDT-ը երեք նպատակ ունի՝

- Գտնել այն աշակերտներին, ում անգլերենի հմտությունը սահմանափակ է (լիովին սահուն չեն անգլերեն)
- Որոշել անգլերեն լեզվի հմտության մակարդակն այն աշակերտների մոտ, ում անգլերենի հմտությունը սահմանափակ է
- Գնահատել անգլերենի սահմանափակ հմտություն ունեցող աշակերտների առաջընթացն անգլերեն լսելու, կարդալու, խոսելու և գրելու կարողություններում:

Քննության բնույթը

CELDT-ն հիմնված է Կալիֆորնիայի անգլերեն լեզվի զարգացման ստանդարտների վրա, որոնք առկա են Կալիֆորնիայի Կրթության Դեպարտամենտի (California Department of Education, CDE) կայքում՝ <http://www.cde.ca.gov/be/st/ss/documents/englangdevstnd.pdf> և իսպաներեն լեզվով՝ <http://www.cde.ca.gov/be/st/ss/documents/eldspan.pdf>:

CELDT-ն չափում է աշակերտի անգլերեն լեզվի կարողությունները հետևյալ բնագավառներում՝ լսել, խոսել, կարդալ և գրել:

Լսելու բնագավառը չափում է, թե որքան լավ են աշակերտները հասկանում անգլերենով լսված տեղեկությունը: Աշակերտներից պահանջվում է հետևել բանավոր ցուցումների և ցույց տալ քննողի կողմից ընթերցվող տեղեկության և պատմությունների ըմբռնում: Մանկապարտեզից մինչև երկրորդ դասարան աշակերտներից նաև պահանջվում է ասել բառեր, որոնք հանգավորվում են քննողի տրված բառերի հետ:

Խոսելու բնագավառը չափում է, թե որքան լավ են աշակերտները կարողանում բանավոր, անգլերենով արտահայտել իրենց մտքերը և պատասխանել հարցերի: Աշակերտներից պահանջվում է անվանել առարկաները և նրանց կիրառությունը, բանավոր պատասխանել հարցերի և պատկերներով պատմություններ պատմել:


Կարդալու բնագավառը չափում է, թե որքան լավ են աշակերտները կարողանում անգլերեն կարդալ: Մանկապարտեզում և առաջին դասարանում (K-1) աշակերտներից պահանջվում է նշել գրքի մասերը, անվանել տառերը և դրանց հնչյունները, և կարդալ պարզ բառեր ու նախադասություններ: Երկրորդից մինչև տասներկուերորդ (2-12) դասարաններում աշակերտներից պահանջվում է բառեր ընտրել նախադասություններն ավարտելու համար, ցուցադրել դասարանին համապատասխան բառապաշարի իմացություն և ցուցաբերել կարդալու ըմբռնում:

Գրելու բնագավառը չափում է, թե որքան լավ են աշակերտները կարողանում անգլերեն գրել: K-1-ում աշակերտներից պահանջվում է արտագրել տառեր և բառեր, գրել պարզ բառեր՝ հիմնվելով քննողի կարդացած պատմության վրա, և նշել պարզ կետադրությունն ու մեծատառերի գրությունը, որն անհրաժեշտ է կարճ նախադասությունում: 2-12 դասարաններում աշակերտներից պահանջվում է ցուցաբերել քերականություն իմացություն, նախադասություններ գրել և կարճ շարադրություն գրել:

CELDT քննության հարցերի նմուշները (անգլերենով) կարող եք գտնել *Հրատարակված քննության հարցեր* փաստաթղթում CDE-ի ինտերնետային կայքում՝ <http://www.cde.ca.gov/ta/tg/el/documents/celdtrtqs0111.pdf>:

Աշակերտի կատարման մակարդակի զեկույցի մեկնաբանում

Ստորև բերված է *CELDT աշակերտի կատարման մակարդակի զեկույցի* նմուշ: Այն ցույց է տալիս աշակերտի գնահատականը և կատարման մակարդակը յուրաքանչյուր բնագավառում և ընդհանուր առմամբ: K-1-ի համար ընդհանուր գնահատականը հաշվարկվում է որպես լսելու 45%, խոսելու 45%, կարդալու 5% և գրելու 5%: 2-12 դասարանների համար ընդհանուր գնահատականը բոլոր չորս բնագավառների գնահատականների միջինն է: Յուրաքանչյուր բնագավառի գնահատականը և ընդհանուր գնահատականը դասակարգվում է ըստ հինգ կատարման մակարդակների՝ սկզբնական, վաղ միջին, միջին, վաղ առաջադեմ և առաջադեմ: Ընդհանուր կատարման մակարդակների նկարագրությունը կցվում է այստեղ: Ի լրացում դրան, տրամադրվում է ըմբռնման գնահատականը (լսելու և կարդալու բնագավառների գնահատականների միջինը):



Պարզաբանագիր՝

- A: Աշակերտի անունը (ազգանուն, անուն) և ծնողի/խնամակալի փոստային հասցեն
- B: Աշակերտի անունը և դասարանը
- C: Քննության նպատակը և քննության ամսաթիվը
- D: Աշակերտի ծննդյան ամսաթիվը, առաջնային լեզուն, և նահանգային ու տեղային ID համարները
- E: Դպրոցը և շրջանը, որտեղ անցկացվել է քննությունը
- F: Ընդհանուր և գնահատված բնագավառների յուրաքանչյուրը գնահատականների հնարավոր

- սանդղակով
- G: Կատարման մակարդակները (Առաջադեմ, վաղ առաջադեմ, միջին, վաղ միջին և սկզբնական)
- H: Մյուսեր և գնահատականների սանդղակ, որոնք ցույց են տալիս աշակերտի կատարման մակարդակը յուրաքանչյուր բնագավառում և ընդհանուր առմամբ
- I: Ըմբռնման գնահատականը
- J: Ինչպես կարդալ այս զեկույցը

Աշակերտի կատարման մակարդակի զեկույցում սյունների բարձրությունը ներկայացնում է աշակերտի կատարումը: Առաջին սյունը ցույց է տալիս ընդհանուր կատարման մակարդակը, իսկ մնացած սյուները ներկայացնում են յուրաքանչյուր բնագավառում կարատման մակարդակը:

CELDT գնահատականներն օգնում են դպրոցին որոշել, թե ինչ տեսակի դասարանային ուսուցանում է անհրաժեշտ աշակերտին: Դպրոցը նաև օգտագործում է այլ քննությունների գնահատականները, դասատուների գնահատումը և ծնողների հետ խորհրդակցությունները, որպեսզի կայացնի իր որոշումները CELDT-ում հաջողության հասնելու համար աշակերտը պետք է ձգտի տիրապետել բոլոր բնագավառներին: Դպրոցից կարող եք տեղեկություն ստանալ, թե ինչպես օգնել աշակերտին հասնելու այս նպատակին:

Եթե օգտագործվել է փոփոխված քննություն կամ այլընտրանքային գնահատում մեկ կամ ավելի բնագավառներում, ապա այդ բնագավառ (ներ) ը նշված կլինի աստղանշով (*), և զեկույցը կունենա հետևյալ ծանոթագրությունը՝

* Այս բնագավառի համար օգտագործվել է փոփոխված քննություն կամ այլընտրանքային գնահատում: Փոփոխությունները կամ այլընտրանքային գնահատումները փոփոխում են այն, ինչը չափում է CELDT-ն, և այդ պատճառով, աշակերտը ստանում է նվազագույն հնարավոր գնահատականի սանդղակը (lowest obtainable scale score, LOSS): Քանի որ LOSS-ը նվազեցնում է ընդհանուր գնահատականը, այս դեպքում պետք է զգուշորեն մեկնաբանել արդյունքները:

Եթե քննության ժամանակ անհամաչափություն է տեղի ունեցել, ապա այդ բնագավառ(ներ)ը նշված կլինի “^” նշանով, և զեկույցը կունենա հետևյալ ծանոթագրությունը՝

^ Այս բնագավառի քննության ժամանակ անհամաչափություն է տեղի ունեցել: Դպրոցից կարող եք լրացուցիչ տեղեկություն ստանալ:

Հաջորդ էջում բերված CELDT ընդհանուր քննության կատարման նկարագրերը բացատրում են, թե աշակերտը սովորաբար ինչ գիտի և ինչ կարող է անել անգլերեն լեզվով յուրաքանչյուր մակարդակում: Յուրաքանչյուր բնագավառի քննության կատարման նկարագրերը տրված են անգլերեն լեզվով *աշակերտի կատարման մակարդակի զեկույցի հետևում*:

CELDT-ի մասին լրացուցիչ տեղեկություն

CELDT-ի մասին լրացուցիչ տեղեկություն կարող եք գտնել CDE-ի ինտերնետային կայքում՝ <http://www.cde.ca.gov/ta/tg/el/>:

CELDT ընդհանուր քննության կատարման նկարագրեր մանկապարտեզի և առաջին դասարանի համար

Առաջադեմ

Անգլերեն լեզվի կատարման այս մակարդակի աշակերտները հաջողությամբ հաղորդակցվում են տարբեր ունկնդիրների հետ բազմաթիվ ծանոթ և նոր թեմաներով՝ սոցիալական և ուսումնական պահանջները բավարարելու համար: Որպեսզի նրանք հասնեն իրենց հասակակիցների հմտության մակարդակին, որոնց համար անգլերենը մայրենի լեզուն է, նրանց դեռևս անհրաժեշտ է լեզվական աճ և հղկում: Նրանք կարող են բանավոր նշել և ամփոփել կոնկրետ մանրամասներ ու վերացական հասկացություններ անփոփոխ ցուցումների ժամանակ բոլոր ուսումնական բնագավառներում: Գրավոր արտադրանքը արտացոլում է դասարանին համապատասխան դատողություն: Միավորները հազվադեպ են և չեն նվազեցնում հաղորդակցությունը:

Վաղ առաջադեմ

Անգլերեն լեզվի կատարման այս մակարդակի աշակերտները սկսում են միավորել անգլերեն լեզվի տարրերը բարդ, իմացական իրավիճակներում և կարող են օգտագործել անգլերեն լեզուն ուսումնական բնագավառներում սովորելու համար: Նրանք կարող են նշել և ամփոփել համարյա բոլոր կոնկրետ մանրամասներն ու վերացական հասկացությունները անփոփոխ ցուցումների ժամանակ համարյա բոլոր ակադեմիական բնագավառներում: Բանավոր արտադրանքը բնորոշվում է ավելի ճարտար դատողություններով, և գրավոր արտադրանքը պարունակում է պարզ նախադասություններ՝ հաճախակի կիրառելով երկու վանկանի բառեր: Միավորներն ավելի հազվադեպ են և համարյա չեն դժվարացնում հաղորդակցությունը:

Միջին

Անգլերեն լեզվի կատարման այս մակարդակի աշակերտները սկսում են ավելի ճշգրիտ օգտագործել անգլերեն լեզվի կարողությունները հաղորդակցման և ուսուցման պահանջները բավարարելու համար: Նրանք կարող են նշել և հասկանալ ավելի կոնկրետ մանրամասներ ու որոշ վերացական հասկացություններ անփոփոխ ցուցումների ժամանակ: Նրանք կարող են ավելի հեշտ բանավոր պատասխանել և արտահայտվել հաղորդակցության և ուսուցման ավելի այլազան պահանջների ժամանակ, և ավելի քիչ սխալներ են թույլ տալիս: Գրավոր արտադրանքը սովորաբար ընդլայնվել է մինչև հասարակ արտահայտություններ և մեկ վանկանի բառեր: Միավորները դեռևս դժվարացնում են հաղորդակցությունը:

Վաղ միջին

Անգլերեն լեզվի կատարման այս մակարդակի աշակերտները շարունակում են զարգացնել անգլերենով ըմբռնելու և արտադրելու կարողությունները: Նրանք կարող են նշել և հասկանալ ավելի կոնկրետ մանրամասներ անփոփոխ ցուցումների ժամանակ: Նրանք կարող են ավելի հեշտ պատասխանել հաղորդակցության և ուսուցման ավելի այլազան պահանջների ժամանակ, և ավելի քիչ սխալներ են թույլ տալիս: Բանավոր արտադրանքը սովորաբար սահմանափակվում է արտահայտություններով և անգիր արված հայտարարություններով ու հարցերով: Գրավոր արտադրանքը սահմանափակվում է տառերով և հաճախ կրկնվող, մեկ վանկանի բառերով: Հաճախակի սխալները դեռևս նվազեցնում են հաղորդակցությունը:

Սկզբնական

Անգլերեն լեզվի կատարման այս մակարդակի աշակերտները կարող են ցուցաբերել անգլերենով ըմբռնելու կամ արտադրելու շատ քիչ կամ ոչ մի կարողություն: Նրանք սկսում են հասկանալ շատ քիչ կոնկրետ մանրամասներ անփոփոխ ցուցումների ժամանակ: Նրանք կարող են պատասխանել որոշակի հաղորդակցության և ուսուցման պահանջների, սակայն շատ սխալներ են թույլ տալիս: Բանավոր արտադրանքը սովորաբար սահմանափակվում է անկապ բառերով և անգիր արված հայտարարություններով ու հարցերով: Գրավոր արտադրանքն անհասկանալի է կամ սահմանափակվում է հասարակ տառերով: Հաճախակի սխալները դժվարացնում են հաղորդակցությունը: